I-419

X
7-2144

ՄՈՒՇԱՐ

XXXV ՑՈՒՇԱՐ 1917

ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ ՆԻՒՐՈՂՆԵՐ

Ներկայ 1917 թ. ներեւեալ հաստատութիւններէ եւ անձնաւորութիւններէ կողմից ուղարկուում են ետեր՝

Աղբիւրի եւ Տարազի խմբագրութիւնից (*մշտական նւէր, քանի որ նրանք հրատարակւում են, սկսած 1914 թ.-ից*) Զարուհի Նազարեանի *յիշատակին՝ 1) Հայ Գրողների Ընկ. 2) Թիֆլ. Զդրաշէնի եկ. ծխ. դպրոցին, 3) Թիֆլ. կուսանոցին, 4) Թիֆլ. «Մեղուն» աշխ տան, 5) Շուշու Ղազանչեցոց եկեղ. քահանայ միաբան, 6) Շուշու Ղազանչ. եկ. ծխ. և 7) Օշական ս. Մեսրոպ. ուսումն., Հմայեակ Նազարեանի յիշատակին 8) Շուշու, 9) Բազէի ըէալակ. ուսումն., 10) Պետրոգրադի տեխնօլոգ. ինստիտուտին*։ Լեւոն եւ Բաբգեն Բեկ-Յովսեփեան *զինուորականների կողմից Զարուհի Նազարեանի յիշատակին Սևանայ վանքի զրադարանին, տիկ.* Տիրուհի Կոստանեանից *իր եղբայր բժշկ.* Աւետիք Բաբայեանի *յիշատակին Հառիճի վանքի ուսումն., տիկ.* Վարվառէ Բալուդեանից *յիշատակ իր ամուսնին* Զաւադ-բեկ Բալուդեանի, *(Թողնելով խմբագր. տրամադրութեան տակ) ռազմի դաշտից* Ա. Ն. Աֆրիկեանից *(Թողնելով խմբ. տրամ.) տիկ. Հռիփսիմէ Ադամեանից Ղարաբաղ, Դաւիթ դիւղի ուսումն. պ. Յար. Սարգս. Փարաջանեանից 5 օր 1) Սոզղի, 2) Գորու, 3) Օնու, 4) Զխարի, և 5) Սուրամի եկեղ ծխ. ուսումն., Անուշաւան Յովհաննէսեան իր հանգուցեալ ամուսնու ս. Շուշանիկ (ծն Ափոյեան) Յովհաննէսեանի գագաղի պահակի փոխարէն 7 Աղբիւր-Տարազ՝ 1) Սարըղամըշի եկ. ծխ. ուսումն. 2) Բաշքէյի կ. Հ. Բ Ը. գրադար., 3) Այգեհատի Սիմ. Զաւարեանի անուան դպրոցի, իսկ մնացեալ 4 օր. ըստ հայեցող. խմբագր.) պ Տիգրան Ափրիկեանից 30 օր. Աղբիւր՝ 1) Նորաշէնի, 2) Մեծ Քափանակի, 3 Մեծ Քլէյթիի 4 Փալաքեանտի, 5) Սոլակի, 6) Օրգակլուի, 7) Դիմաշէնի, 8) Ռնգամալի, 9) Նորդուզի, 10) Զիլուխլուի, 11) Ներքին Ախտալի, 12) Վարդաշէնի, 13) կաբըխի, 14) Բազար Ճիւղի, 15) Ղալաքիլիսի, 16) Սաղլուի, 17) Տամղլուի 18) Պանասկանքի, 19) Սուլտան, 20 Մամզարաի, 21) Էրտափինի, 22 Զրադացներ, 23) Ախալգորի, 24 Սուրամ, 25) Զխարի, 26) Օշականի, 27) Ղըզլքիլիսէի. 28) Զեղդիի 29) Ղարաղօլի, 30) Սուլթան-Նուխու գիւղական դպրոցներին։*

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ն կ ա ր ճ ե ր

Ս. Աստուածածին և մանուկ Յիսուս, Մեր լուսիկը, Հեզ լուսոս, Ծտիկը գերանին, Սևանայ վանքն ու դպրոցը, Գիշատիչները զբօսանքում, Փոքր հերթապահ, Զիարշաւ, Զբօսանք ռասկան ջրերի վրայ, Տօնածառ, Փոքրիկ հերոսուհին, Ձմեռ։

Ն ի ւ ր

Դարձեալ նոր տարի, Ն. Տէր-Հակոբեան, Իմ պանարամը ծնդուկ (Կ. Կ. Մելիք Շահնազարեան), Աստեղը... Ս. Զուլալեան, Ոսկի աշտանակ... Առաքելոց, Կատուն ոստիկան... Զար-Վեր, ՀԱՅՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ՝ Սևանայ լիճը... Զ. Տէր-Գրիգորեան, Վախկոտ... Օր. Մ. Սերոբեան։

Չ ա ր ճ ա լ ի ք

Աղբիւր-Տարազ նիւրոդները, Յայտարարութիւններ։

1883 ԵՐԵՍՈՒՆՅԻՆԳԱՄԵԱԿ ԱՂԲԻՒՐԻ 1917

ՄԱՆՈՒԿՆԵՐՒ ՓԵՏՐՆԵՐԻ ԱՄՍԱԳԻՐ
ԳԻՇԵՐԱՅԻՆ

Համար պատկեր ազգաբոլ ամսագիր

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ Ռուսաստանում
5 ր., առանձին №-ը 1 ռ., արտասահմանի բաժանորդների համար տարին 20 ֆր.

Խմբագրութիւնը յոդուածները կրճատում է, ինքնակամ փոփոխութեան և չի տպելիքը չէ վերադարձնում։
Ընծայական տեսակցութիւն խմբագրի հետ արեքշաբթի և ուրբաթ առ. 1։--12 ժ.։

ՏՊԲԱԴՐՈՒԹԻՒՆ Թիֆլ., Գօլովինսկի պր. տ. № 41. Տել.. 16-90։

Հասցէն՝ Тифлис, Редакція АГБЮР.
Tiflis. Direction AGBUR.,

Խմբագիրը եւ հրատարակիչ՝
ՏԻԳՐԱՆ ՆԱՋԱՐԵԱՆ

XXXV ՏԱՐԻՆԻՐՔ 1817

ԴԻՒՐԱՀԱՒ ՆՈՐ-ՏԱՐԻ

Ահա պարզեալ մի «Նոր-տարի»,
Պանդուխտ հղրայր, անմոռաց,
Բայց ինձ ուրկէ ի՞նչ «Նոր քարի»,
Երբ մ'ևս սիրան է տխրամած։

Պանդո՛ւխտ հրուշի՞նչ «Նոր տարի»,
Երբ օր-ս բնաւ չ'ունենք.
Դարպոտ սրտին ի՞նչ «Նոր-բարի»,
Երբ չունինք զէթ մի սփոփանք։

Նիսոֆ Տեր-Նիսոֆեան



ԻՄ ՊԱՆԱՐԱՄԸ

(Նուէր մանուկներին)

Սիրուն մանուկներ, իմ աչքի լոյսեր, մեր խեղճուկ ազգի ապագայ յոյսեր, քանի տարի է ես ձեզանից հեռի, բայց կատարած սրտիս դուք միշտ սիրելի, ես իմ պանարամ ձեզնից թագցրի, որ դուք չը տեսնէք հայ ազգի վիճակ, նրա սև օրերը ցաւ ու տառապանք։

Բայց երբ դուք այժմ շատ բան էք լսել, ձեզնից շատերը հէնց իրենց աչքով հայրենի երկրի աւերը տեսել, ազիզ հօր ու մօր, քրոջ ու եղբոր թշնամու ձեռքով մահն իսկ տեսել, ինչո՞ւ թագցնեմ ես իմ պանարամ, հայերիս կրած այս երկու տարւայ անթիւ վէրքերը ես ձեզ չը բանամ։

Ահա նայեցէք այս աւերը դիւղին, որ Թառ է եղած տարի կատարին, մարդ չըկայ մէջը, տները հրդեհուած, գոմերը գատարկ, իսկ եկեղեցին, նրա շուրջն ու բակ դիակով լցուած։ Ոչը որ նայում ես հայի արիւնն է, որ կարմիր ներկով թողել է իր հետքը, ձայն ծպտուն չըկայ, միայն բւերն են, որ մութ գիշերին իրենց կանչոցով սարսափ են բերում անց դարձ անողին։

Հայը այդ գիւղում երկար տարիներ հանգիստ ապրում էր իր ընտանիքով, լծնում էր գաշտը վար ու ցանքն անում, այգի ու պարտէզ խնամքով պահում, այս ու այն բարիք իրեն տուն բերում։ Բայց ահա եկաւ գուլումի տարին, ռուս ու տաճկի կռիւն սկսաւ, տաճիկն ու քուրդը այդ գիւղը մտան, սրի անցրին բոլոր մեծերին, մօրը առաջին որդուն սպանեն, տղայ ու աղջիկ առաջներն արած՝ նախիրի նման գիւղից քշեցին։

Այդ անտուն անտէր որբերից շատեր կէս ճանապի վրայ ընկան սովամահ, շատեր գետերում, ալիքների մէջ, եղան խեղդամահ, շատեր քրդի մօտ, ինչպէս տան ծառայ, կեղտ ու մուրի մէջ ցերեկ ու գիշեր քրտինք են թափում, մի կտոր չոր հաց ուտելու համար կեանքերնին մաշում, հալ ու մաշ սրտով, արցունքն աչքերին, հայրենի գիւղի կարօտը քաշում...

* * *

Ահա, սիրելիք մի ուրիշ պատկեր, հայ ոզբիկների համեստ ննջարան։ Քնած են որբերը, խուփ են աչիկները, քնած են մարմնով, բայց արթուն հոգով։ Եւ այդ հոգին է մատաղ որբերի, որ ամեն գիշեր առաւոտում է վեր, տանում է ներքանց հայրենի երկիրը, հայրենի օջախ, հայրենի տնակ, մանկածում նրանց դաշտերը ու լեռները հանդ ու արտօրայք կանանչ պարտէզներ։

Տես ահա մինը ժպտում է քնած, իր երազում տեսել է քրոջ, մանուշակի փունջ իր ձեռին բռնած, ուզում է խլել, բայց նա փախչում է և երբ վազում է նրա ետևից, յանկարծ ընկնում է ու զարթնում քնից։

Ահա մի որբիկ յօնքերն է կիտել, երևի մէկը քէֆին է դիպել։ Միւսը խաչել է ձեռները կրծքին, ծռել է վիզը շրթունքը շարժում, կասես թէ մէկից միբան է խնդրում։

Միւսը կծկւել է վերմակի տակին, նիհար երեսը ձեռքերով ծածկել, կարծես ուզում է մէկից պաշտպանուել։

Երրորդը շուռ-շուռ վեր-վեր է թռչում, կասես մէկի հետ կռիւ է մղում. «մայրիկ, քուրդն նկատ, վա՛յ մայրիկն ընկատ» ասում որբիկն տեղից վեր թռչում, գոզդոզ ձեռներով բարձը տիտիտում։

Ահա մի ուրիշ, կարծես լացում է, այդ լացը կասես կոկորդն է խեղդում. նա իր երազում իր հօրն է տեսել, գլուխը կորցած, ցեխի մէջ ընկած, դիակի վրայ մայրը ուշաթափ արեամբ շաղախուած, քոյրերը գերի, տունը կրակուած, բոլոր ազգականք սրի անց րած, «ա՛խ հայրիկ, մայրիկ» կանչում է տղան ու յանկարծ ընկնում յատակի վրայ։

Այս խարտեաշ տղան կարծես դողում է, նա իր երազում տեսնում է այն օր, երբ ձմրան ցըրտին, քաղցից թուլացած, ոտ ու ձեռ սառած ընկած է գետին և յանկարծ մի ձայն հասնում ականջին, ձեռները մեկնում սպասում մէկին։ Եւ ահա նրան մի խումբ հայ զինուոր, դնում են սայլում, շորով փաթաթում, տանում իրենց հետ մահից փրկում...

Քնած են որբեր, այնպէս է թուում, բայց նրանց հոգին հեռուն է պտտում, հայրենի երկրի կրած տառապանք, սև ու մութ օրեր նրանց հետ բերում։

* * *

Այո՛ սիրելիք, ծանր է տաստիկ որբերի վիճակ, սրանք զրկուել են հօրից ու մօրից, բաղդի մի բերմամբ ընկել մեր երկիրը, իրենց փրկութիւն տպատում մեզանից։

Օգնենք մինք նրանց ինչով կարող ենք, սիրտ տանք այդ անմեղ փոքրիկ որբերին, մոռացնենք նրանց յուշեր տխրագին, միջոց տանք նրանց վայելուչ կեանքի մինչև կըբացուի արևն մեր ազգի։

Ծ.

(Դ. Գ. Մելիք-Շահնազարեանց)

ԱՍՏՂԵՐ

(Ռուսերեն)

Մի օր աստղերով հրճված՝
Ասում է Փանկն մանկիկ.
—Ո՞րքան աչերով, մայրիկ,
Նայում է Փանոն Աստված։
—Աստված մեր մոտ է Փոքրի,
Անուշաբույր, ծաղկաշունչ
Տե՛ս, այն դաշտը գեղանի,
Որան այնպէս, ինչպէս Եմ
Ա՛ռջ է նայում աչալուրջ։
—Օ՛, մայրի՛կ ջան, Աստծուն
Տեսնում եմ ամպոջ ես հիմա.
Այն քարերը սիրուն
Այնպէս սիրո՞ւն է շողում...
Գիտե՞ս որտե՞ղ... նո՛ւ աչերում։

Սարգիս Հարությունյան

ՄԵՐ ԼԱՒԻԿԸ

Պատիկ դժգոհ,
Հասակը փոքրիկ,
Աչերը սիրունիկ,
Ցաւերը խնծոցիկ,
Բերանը անուշիկ,
Ո՛վ կայ նրա պէս գեղեցիկ.

Հ ր ա ն Ե.

(Նուէր Հրատ. գ-Հրածին-Արտոյտ-Անահիտ-Տիգրանուհուն)

ՈՍԿԻ ԱՁՏԱՆԱԿ

ՈՍԿԻ ՉԱՄԴԱՆ

(Հ է ք ի ա թ)

Կար չը կար արևելքում մի խելօք մարդ կար, որ մեծ ընտանիքի տէր ու չունևոր էր։ Ամենքը զարմանում էին, թէ այդ մարդը աշխարհին խելք էր տալիս, ինքը իրեն բարիք չէր կարողանում տանել։ Շատ էր վեր-վար գալիս, անօգուտ, մալ-ապրանք չէր կարողանում ժողովել։ Նրա տանն էր հացն ու հալաւը միշտ պակաս, նրա կնոջ տրտունջն ու բողոքն անվախաս։

— Մարդ, ասում էր յաճախ կնիկը ամուսնին, քեզ ինչ պէտք է իմանալ, թէ տորոնի ներկի հիւթը երկրից է թէ Արևից (մեռնեմ Արևին, ամեն բան նրանից է)։ Դու քու ցանքսին աշէ, հոգէ ու շատացրու։ Կարմիր գոյնի հողից թէ արևից ստանալը մեզ հաց չի տալ, այլ տորոնի շատութիւնը մեզ հալաւ էլ կը տայ, կօշիկ էլ, հաց էլ, եղ էլ։ Քեզ ինչ է պէտք իմանալ, թէ գիսատրի ճիճուն իրեն մէջն է բեղմնաւորում, թէ դուրսը, դու շատ գիսատր ծառից թափիր, նա մեզ կը տայ հազար բարիք։

— Ես տրաքւում եմ, կնիկ, հասկացածիդ էլ ես խօսում, խելքիդ չըհասին էլ։ Դու խմորդ շաղէ, լացքդ արա, քո ինչիդ է պէտք միջամտել իմ խոհերին։

— Ցորեն չունես, ալիւր չունես, ես ձրտեղից հաց թխեմ, կտաւ չունես, մանած չունես, ես ինչով շոր կարեմ, որ լանամ...

— Կնիկ, հէրիք գահլաս տանես, լռիր, թէ չէ գլուխս կառնեմ ու կը փախչեմ, դիար դիար կը կորչեմ...

— Կերթաս, գնա, բայց լակոտներիդ էլ տար, հոգիս ազատիր...

— Ձեցերդ վրադ կը թողնեմ ու կերթամ, ասաց Զուզուրդրունը (պլուտ) ու մի օր թողեց տուն, տեղ, դեղ ու հանդ, գնաց, գնաց ու կորաւ։ Շատ վհատեցին, շատ հարցրին, շատ խաբարներ ղրկեցին, սալըղը չառին, գնաց ու գնաց։ Շատ գնաց, թէ քիչ գնաց, մարդ խաբար չէ բայց մի օր Զուզուրդրն ընկաւ մի մեծ դաշտ։ Տեսաւ, որ հեռուն ինչոր ծուխ է բարձրանում, կրակ է երևում։ Դիւզ գնաց ծխի կողմն, գնաց ու հասաւ այդ ծխին։ Ծխի գլխին մի մոդ էր կանգնած, մարդ էր, մարդ չէր, աչկատար էր, աչկատար չէր։ ժժդահա վիշապ էլ չէր։ Ինչոր է, այդ հրէշն ասաց.

— Մ՛յ Զուգուրդ, օձն իր պորտով, արծիւն իր թևով, առիւծն իր ճանկերով երբեք չի համարձակուել այստեղ մօտենալ, դու ինչպէս սիրտ արիր ու եկար։

— Թէ դու ինձպէս Զուգուրդ լինէիր, էլ բեղթաը տեղ կերթայիր։

Թէ քու կնիկդ չքաւորութեանդ համար քո էլ երեսը օրական քառասուն անգամ պատառէր, դու էլ կերթայիր թշնամուդ ճանկը կը գլորուէիր։ Կամ պիտի երթամ Արազն ընկնիմ խեղդուեմ, կամ մի բեռ ոսկի առնեմ պիտի տանիմ, որ ազատուեմ։

— Ուրեմն դու աշխարհիս երեսին մի ուղտաբեռ ոսկի ես միայն պահանջում, ասաց հրէշը զննելով Զուգուրդի դէմքը։

— Միայն, մի միայն այդքան, որ կնոջս տրտունջից ազատուեմ, ասաց հառաչելով Զուգուրդը և նստելով հրէշի դիմաց, աւելացրեց.

— Ես աշխարհի խրատատուն եմ, կնոջս աչքում խելագար։ Ամբողջ աշխարհը ինձնից դաս է առնում կինս ամեն օր ինձ յորդոր է կարդում, որ խելոքանամ։ Այսպէս անել վիճակում քեզ մօտ թէ չը գայի հապա ո՛ւմ մօտ երթայի, ասաց ու լռեց Զուգուրդը։

— Այնտեղ աբայի վրայ տասը լիտր ոսկի ունիմ, մի՛ վախենար, բաց աբայի վէշը և տես։ Ես այդ ոսկին ամբողջապէս քեզ կը տամ, եթէ խօսքս ճշտութեամբ կատարես։ Իմ առաջարկս անփոփոխ կատարի՛ր, տար ոսկին ընտանիքդ պահի՛ր։

— Ուրախութեամբ, ասաց Զուգուրդը, ես վճռել եմ մահն աչքս առած առաջ գնալ, յաղթել կամ մեռնել։ Քո առաջարկից լաւը էլ ո՛վ պիտի ինձ առաջադրէ։ Ասա, ես պատրաստ եմ կատարելու։

— Խօսք տալիս ես, որ անպայման կատարես, ապա թէ ոչ պիտի մեռնիս։

— Անդառնալի կերպով, խօսքըս խօսք է, ասաց Զուգուրդը, ես պիտի կատարեմ, թէ ինձ ջուրը և հուրը մացնես։

— Ես քեզ կը բարձրացնեմ այս սարի կատարը, այն տեղ մի այր կայ, որի քարի դուռը կը բացւի, երբ ես կախարդեմ։ Դու պիտի մտնես այդ այրը և հօթը գլխանի ոսկի աշտանակը (շամդանը) պիտի դուրս բերես և ինձ տաս։ Այդ աշտանակի փոխարէն ես քեզ կը տամ բացի այս ոսկին, նոյնպէս ուրիշ շատ ապրանք։ Միայն պիտի աշխատես աշտանակն առնել ու դուրս գալ, ուրիշ բանի ձեռք չը պիտի տաս, ոչինչ չը պիտի վերցնես։ Եթէ որևէ բան վերցնես, խակոյն թալիսմը կոչընջ-

UNSOT BAZ

չանայ, այրի դուռը կը փակւի, դու կը մնաս այնտեղ խաւարի մէջ յաւիտեան։ Համաձայն ես, նորից հարցրեց հրեշը։

— Եթէ դու իմ տեղս լինէիր, կնոջդ ամենօրեայ հալածանքի մատնւած տանջւէիր, ոչ միայն սիրով, այլ մեծ հրճւանքով պիտի ընդունէիր այդ առաջարկութիւնը։ Ես պատրաստ եմ, բարձրանանք։

— Վերջին անգամ նորից կրկնում եմ, ասաց հրեշը բացի ոսկէ աշտանակը ուրիշ բանի ձեռ չը պիտի տաս, ոչինչ չը պիտի վերցնես։

— Իմ աչքիս, իմ ճակտիս վրայ, ասաց վճռականապէս Զուգուրդը և սպասեց հրեշի հրամանին։

Անմիջապէս հրեշն իր հրեղէն ձին կանչեց, հեծաւ և գաւակն առաւ Զուրգուրդին ու գնացին։ Շատ գնացին թէ քիչ, այդ մարդը չը գիտէ, յանկարծ Զուգուրդը աչքը բաց արաւ, որ մի բարձր սարի ապառաժ կողի առաջն են կանգնած։ Ապա հրեղէնից ցած իջան, գնացին չորս չորս բոլորը, հրեշն սկսեց իր կախարդական աղօթքը, որը ոչ հայերէն կը, ոչ էլ պարսկերէն, այլ մի անհասկանալի թալիսմական լեզուով։ Երբ աղօթքը վերջացրեց, ապառաժի բարձունքում ժայռը վերից վար ճեղքւեցաւ և բացւեցաւ։

— Դէհ շտապիր, այդ ճեղքից ներս մտիր, ասաց հրեշը, ժամանակ մի կորցնիլ, չը լինի թամահ անես, ուրիշ բան վերցնես։

— Շատ բարի, ասաց Զուգուրդը և հրեշտակի նման թեւաւորւած թռաւ ապառաժի ճեղքւածքից ներս՝ այրը մտաւ։ Ինչ այր, ինչ հարստութիւն, Զուգուրդը մնաց շւարած։ Վեր նայեց, վար նայեց, չորս բոլորը գննեց, քիչ մնաց որ խելքը թռցնէր։ Ոսկին, արծաթը թէջ էր գարկած, մարգարիտի, մարջանի, թագերէ-ների թիւն ու հաշիւը չը կար, Զմռուխտը, հակինթը, լալը, ադամանդն ու փիրուզը ցրւած էր ամեն կողմը։ Ամբողջ պատերը առաստաղը անգին քար։ Այնպէս խոշոր, յղկւած շողակներ էին ամրացրած առաստաղին ու որմերին, որ մութ այրը լուսաւորել էին վայլուն արևի ճառագայթների պէս։ Մարդ որ հրեշտակ լինէր, էլի թամահը կը բռնէր, չէր կարող բան չը վերցնել։

(Կըշարունակւի)

ԿԱՏՈՒՆ ՈՍՏԻԿԱՆ

(Հեքիաթ)

Ծիտը երազում
Կորեկ կը տեսնէ

Մի ցուրտ ձմեռային երեկոյ էր։ Գիւղական մի փոքրիկ, պարզ ու մաքուր խրճիթում տան փոքրիկները բոլորւել էին քուրսու շուրջը, իրանց սիրելի, զարճասէր տատի հետ, վաղուց նրանք վերջացրել էին իրանց երեկոյեան քէյը և տաղտկալի գիշերից ձանձրացած, խնդրում էին տատին, որ մի նոր հեքիաթ պատմէ։

—Այս հեքիաթը ինձ համար կը պատմես, չէ, տատիկ, ձայն տւեց փոքրիկ Գոհարը՝ աւելի սեղմւելով տատին ու նրա թևը վերցնելով իր փոքրիկ գլուխը։

—Ո՛չ, ինձ համար է, բացականչեց նրա եղբայրը Լևոնիկը, քեզ համար ինչ պատմէ, դու աղջիկ ես, շատ հեքիաթներ գիտես, միշտ տատի մօտ ես լինում դու։

—Ինձ համար է, ինձ, բարձր կոչեց Յորէնը՝ մեծ եղբայրը։ Ես այսօր տատի համար փայտ եմ բերել, օջախ եմ վառել, իսկ դուք ինչ էք արել...

—Բոլէք չան, մի կուէք. սպասէք մի բռնոթի քաշեմ, յետոյ կըպատմեմ։ Դէ, սուս, թէ չէ էլ չեմ պատմի, հա։

Տատը սովորութիւն ունէր, երբ մի հեքիաթ պատմում էր՝ վերջը աւելացնում էր մի որևէ առած և իբրև խրատ նէրում այս կամ այն թոռնիկին։ Հէնց դա էր պատճառը, որ երեխաները ամեն մի հեքիաթի ժամանակ կուում էին, իրար ձեռից խլելու համար։

Բոլորը շնչակտուր սպասում էին տատի սկսելուն։ Վերջապէս տատը իր բռնոթին վերջացնելով, սկսեց։ Մի ցուրտ ձմեռային գիշեր էր, ինչպէս հիմա՝ մեզ մօտ։ Սար ու ձոր պատած էր ձիւնով։ Քամին վզռում և բորենու պէս ոռնում էր։ Մեղճ կենդանիները, մարդիկ, անասուններ, թռչուններ՝ բոլորը ցրտից դողում, սըր-

սրբթում էին, շատերը մտել էին իրանց բներն ու որջերը, իրանց կերակուրը վայելում և խռմփացնում։

Այդ ժամանակ խոտի դէզի մէջին մի ծիտ էր թաղնւել. նա շրջում էր իր ընկերոջ հետ, բայց այդ երեկոյ սաստիկ փոթորիկը բաժանել էր նրանց։ Միւս ընկերն էլ կուչ էր եկել մի տան սրահի տակ։ Առաջինը գլուխը թևի տակ դրած հէնց նոր էր քնել, որ երազում տեսաւ իր ընկերին, որ մի աման կորեկի մօտ և ուրախութիւնից ոչ թէ ուտում, այլ թռչկոտում, ծլւում էր։ Այդ երազից նա յանկարծ սթափւելով, գլուխը թևի տակից հանելովնայեց իր շուրջը։ Նա ինչ տեսաւ, յանկարծ տատը դուռաւ թոռնիկներին։

—Կորեկ, կորեկ, ձայն տուին երեխաները, կորեկ տեսաւ։

—Այդպէս էիք լսում, դարձաւ նա թոռնիկներին յանդիմանելով։

Երեխաները մի բոպէ մնացին շւարած։ Այդ ժամանակ Գոհարի մայրը, որ օրօրոցի վրայ թեկած ծիծ էր տալիս մանուկին՝ աղջկայ թևից քաշելով մի ինչոր բան փսփսաց անկանջին։ Գոհարը սկըսբում ոչինչ չը հասկացաւ և թեքւեց դէպի մայրը պաթզ լսելու։ Այդ նկատեց տատը և բարկացած կոչեց հարսի վրայ.

—Էյ, ա Գուլի, էլի դու մէջ ընկար։

—Ձիւն, ձիւն, միաբերան, կարծես քնից արթնալով աղաղակեցին երեխաները։

—Նոտ, խոտ, մէջ ընկաւ Նորէնը։

Դէ այժմ լաւ լսեցէք. նա խոտ ու ձիւն տեսաւ, հատատեց տատը, երեխաների վէճին վերջ տալու համար։ Երբ առաւօտը քիչ լուսացաւ, արևը ծէգին տւեց, դէղի մէջ պահւած ծիտը լսեց ընկերոջ ձայնը ու թևին տալով թռաւ նրա մօտ։

—Ծուրտ է ասաց առաջինը, որ պահւած էր սրահի տակ։

—Ձիւն է, ասաց միւսը։

—Սոված եմ, շարունակեց առաջինը։

—Նախտ է, վրայ բերաւ երկրորդը։

—Ինչու։

—Որովհետև դու մի աման կորեկի մօտ նստած, այս ցուրտ ձմրանը ոչ գու էիր ուտում և ոչ ինձ կանչում այլ երգում ու թըռչկոտում էիր։ Ծոյլ ես ծոյլ, ծոյլ, տեղն է քեզ, ինչու չէիր ուտում։

—Երբ տեսար, ոըտեղ։

Էն ժամանակ երբ բաժանւեցինք և ես դէղի մէջ թաղնւած էի։

—Հա. հա, հա, ծիծաղեց առաջինը թևապարելով, ընկերս երազում կորեկ է տեսել։ Ծիւ, ծիւ, ծիւ։ Ու պատրաստւեց թռչելու։

—Ո՞ւր, հարցրեց ընկերը տրխրութեամբ։

—Այս մօտիկ գոմը, մի բան ճարելու, թէ չէ սովից ու ցրտից կը մեռնենք։ Դէ թըռա՛։ Ու երկուսով թռան կերակուր ճարելու։



Դէ բաւական է, այժմ գնացէք քնելու։ Մնացածը վաղը կը պատմեմ, ասելացրեց տատը տեղից վեր կենալով։ Բայց թոռնիկները աղերսանքով թափուեցին նրա շուրջը և փեշերից քաշելով, ստիպեցին որ վերջացնի։ Տատը երկար լռութեան մատնուեցաւ։ Յետոյ ասաց.

Ամառնային մի գեղեցիկ առաւօտ էր և ես չէի ուզում շարունակել։ Այս ան-

մայրը, խնդրելով որ շարունակի։

Տատը հարկադրւած էր պատմել և մի կուշտ բռնելի քաշելով, շարունակեց.

—Նրանք ներս թռան երդիկից, որտեղից ըարձրանում էր անասունների շնչառութեան տաք գոլորշին, ու նստեցին առաջին հաստ գերանի վրայ, իրանց շուրջը դիտելու։

Անցագիրը, յանկարծ մլաւեց կատուն, իր թաքստոցից գերանի յետևից ճանկերը բացած դուրս ցատկելով և բռնելով ծտերից մէկին։ Անցագիրը, մոռացաց կատուն, նայելով միւս ծտին, որ վախեցած ճչալով, խուպուպ ձայն արձակելով, պոռոյտներ էր գործում նրա գլխավերևը։ Եւ վերջին անգամ, տեսնելով իր ընկերոջ զոհւելն անխիղճ գազանի ժանիքներից, թռաւ նրա մօտից և ուղղակի թևով կատւի դնչին խփելով, կամեցաւ շփոթել գազանին և իր ընկերոջը ազատել։ Սակայն ագահ կատուն վեր ցատկեց, կամենալով միւսին ևս բռնել։ Բայց վայր գլորւեց երթիկի գերանից, ընկաւ ախոռում կապած ձիի մէջքին, այդտեղից էլ խրտնած ձիու ոտերի տակը։

—Անցագիրը, դու գարխ, դարմանն գնող վաճառականն ես, անցագիրը, ասաց խրտնած ձին իր սմբակների տակ տրորելով կատւին։

Առաւօտը դիւղացին մտնելով գոմը՝ տեսաւ անշնչացած կատւին, բերանում մի ծիտ բռնած. ապշեց և, գլխարկը վերցնելով, դարձաւ դէպի աղօթարանը, խաչ հանեց և մրմնջաց.

—Սուտ չէ ասւած, որ «ինչ չափով չափես, նոյն չափով կը չափւես»։

—Ում համար ասացիր, տատի, առածը՝ մեզ չասացիր, ձայն տալով, թռնիկները նորից շրջապատեցին նրան։

—Բոլորիդ.

—Ո՛չ, ոչ, տատի, մեզանից ոչինչ։

—Յորէնին, որ տանը եղած ժամանակ ձեզ չը ծեծի։

—Էլ չեմ ծեծի... տատի, էլ չեմ... զղջացած ասաց Յորէնը ու ներումն խնդրեց թէ տատիկից և թէ քրոջից՝ այդ օրւայ իր ծեծի համար.

Ցար-Վեր.

Սեւանայ վանքը եւ Ղուկասեան նորաշէն դպրոցը.

ՍԵՒԱՆԱՑ ԼԻՃԸ

«Ջուխտիւններով, ծաղկանց բոյրով,
Ինչպէս ծընող սիրագորով,
Քեզ կողջունեն զմրուխտ հագած
Դեղամ սարերն և Արագած,
Եւ կարօտած աչքի նման
Քեզ կը ժպտայ վճիտ Սեւան,
Որ լեռների շուքերի հետ
Պաք կը խաղայ ալեօք վէտ-վէտ,
Կը փայլփլուի ծիւանքներով,
Կը յօրինի լոյսերի ծով»։

Յովհաննէս Թումանեան

I

Լճի դիրքը, տարածութիւնը,
ածուները եւ պատմական անցեալը։

Հայաստանում բաւական թւով լեռնային լճեր կան, որոնք հնում, ծով կամ ծովակ էին անւանւում և որոնցից նշանաւոր են՝ Վանայ լիճը (Բզնունեաց կամ Տոսպայ ծով)— Թիւրքա-Հայաստանում (վասպուրականում), Ուրմիոյ լիճը կամ Կապուտանը (4000 ֆ.)—Պարսկա-Հայքում (Ատրպատականում) և Սեւանայ լիճը—Ռուսա-Հայաստանում)։

Սեւանայ լիճը կամ Գեօկչան գտնւում է հարաւային Կովկասում, Երեւանի նահանգի հիւսիսային մասում, Նոր-Բայազէթի գաւառում, Արագածի մօտ 60, իսկ Արարատից մօտ 100 վերստ հեռաւորութեան վրայ, Փոքր-Կովկասեան լեռների այն մասում, որ յայտնի են Սիւնեաց լեռներ անունով։ Դա մի ահագին աւազան է, որը ծուռ

*) Փոքր լճերից յայտնի են՝ Գայլատաւայ լիճը (Մասիսից հարաւ-արեւմ.), 7500 ֆ. բարձր ծ. մ., Զրլդըղի լիճը (Ընդհանուր չրջանում), Փարւանայ լիճը (Ծովակ հիւսիսոյ)-Ախալցխայի գաւառում նայլն։

եռանկիւնու ձև ունի՝ ձգուած հիւսիս-արևմուտքից դէպի հարաւ-արևելք՝ և որի երկարութիւնը մօտ 70 վերստ է, իսկ լայնութիւնը (ամենալայն տեղում) 37 վերստ. մակերևոյթը հաւասար է 1240.2 քառակուսի վերստի(24.88 քառակուսի մղոն*),իսկ շրջապատը 214 վերստից աւելի է ծովի մակերևոյթից բարձր է 6340 ֆուտ (905⅝ սաժէն, մօտ 2 վերստ)։

Այդպիսով համեմատած երկրագնդի միւս լճերի հետ՝ Սևանը ամենամեծն է բարձրալեռնային լճերից և մեծ լճերի մէջ ամենաբարձրը ծովի մակերևոյթից

Հէնց լճի մեծութիւնն է պատճառը, որ թուրքերը Գեօկչան անուանում են «դանգիզ»—ծով։ Իսկ հայերս Գեօկչան անուանում ենք նաև Սևանայ լիճ, կամ Գեղամայ ծովակ (մեր Գեղամ նահապետի անունով), կամ Գեղարքունեաց ծով։ Դա մեր հարազատ ու հայրենի ծովն է, որովհետև Հայաստանի գոյութեան հնագոյն դարերից սկսած՝ այդ լիճը միշտ եղել է մեր սահմաններում, նրա շուրջը բնակւելիս է եղել և մինչև հիմա էլ բնակւում է խիտ հայ ազգաբնակութիւն. երբեմն այդտեղ ծաղկած է եղել զուտ հայ ազգային կրօնական կուլտուրա։ Այդ լճի ափերին, մեր քրիստոնէութեան առաջին դարերից սկսած, բազմաթիւ հայ վանքեր են եղել, որոնցից մնացած փլատակները ու ճարտարաբուեստ խաչքարերը հիմա էլ տալիս են ճանապարհորդին։ Դրանք լուռ վկաներ են մեր տխուր ճակատագրի, մեր անցեալ արիւնալի կեանքի, փառքի, հայրենի երկիրը և քրիստոնէական հաւատը պաշտպանելու համար կրած մեր անվերջ կռիւների... Եւ լայնաձակ ծովակը, կարծես, լեռների մէջ դրած պողպատէ մի հսկայական վահան լինի՝ աջեգակի տակ պսպղալիս, մի վահան, սակայն, որ անգօր եղաւ պաշտպանելու իր հարազատներին...

Ջրային աւազանը, քան սովորականին, այստեղ էլ արտայայտել է իր ձգողական ոյժը, և քանի-քանի անգամ արիւնաուռշտ հրոսակներ են անցել այդ ափերով... Գեօկչան յայտնի է ամենահին ժամանակներից իմիջի այլոց այդ լիճը յիշում է նաև Պտօլոմէոսը։

Բացի այդ՝ Սևանի ափերին գտնւած բևեռագիր Ուրարտեան, կամ, ինչպէս ենթադրում են, նախահայկական, արձանագրութիւնները ցոյց են տալիս, որ Գեօկչան վանի Ուրարտեան թա-

*) Լճի աւազանի, այսինքն լճի և իր մէջը թափւող գետերով սահմանւած տարածութեան, մակերևոյթը հաւասար է 4177 քառակ. վերստի։

գաւառների՝ հարաւային կովկասում (Ռուսա-Հայաստանում) գըտնուած՝ երեք կենտրոններից մէկն է։ Ինչպէս յայտնի է, միւս երկու կենտրոնները Արաքսի հովտում են եղել։

Գեօկչի Ուբարտեան արձանագրութիւնները գտնւում են հետևեալ կէտերում.

Առաջինը՝ լճի հարաւային ափերի վրայ կախուած ուղղաձիգ ժայռերից մէկի վրայ, Քեօլանի-Գրլան գիւղից ծչ հեռու։ Այդ բևեռագիր արձանագրութիւնը վաղուց գրաւում էր հնագէտների ուշադրութիւնը, բայց վերջնականապէս կարդացել են Նիկօլսկի և Իվանովսկի ռուս գիտնականները։

Երկրորդը՝ լճի հարաւ-արևելեան անկիւնի ափից ոչ հեռու, Զախալու գիւղ մօտ, մի ժայռի վրայ փորագրած բևեռագիրը, որ նոյնպէս ուսումնասիրել է Իվանովսկին։

Դ որորդը՝ լճի հիւսիս-արևմտեան ափին գտնուղ մի ժայռի վրայ, Օրդակլու հայ գիւղի մօտ*)։

Քեօլանի-Գրլանի մօտ, բլրի վրայ, նոյնպէս և դէպի—արևմուտքում, նկատելի են մի ամուր պարսպի հետքեր, որը ցիկլօպական շինութեան բնաւորութիւն ունի, ապա աւերուած գիւղերի փլատակներ... Մի խօսքով՝ անցեալում Գեօկչի շուրջը արիւնալի պայքարի և վայրագութիւնների ասպարէզ է եղել։

Շատ փոթորկալից է եղել այդ տեղի նաև երկրաբանական պատմութիւնը։ Բաւական է ասել, որ դա, ինչպէս հայկական բարձրավանդակի շատ տեղերում, հանգած հրաբուղխների մի երկիր է, և հէնց այստեղ, Գեօկչում աւելից խիստ է արտայայտուած մեր լեռնավանդակի հրաբխային ծագումը։ Այստեղ, լճի հարաւ-արևմտեան ափին, բազմաթիւ հրաբուղխային գագաթներ կան, իսկ մի քիչ հեռուն ձգուած է Աղվաղանի լեռների կօնաձև բարձր գագաթների շղթան, որոնցից համարեա ամեն մէկը ակնյայտնի խառնարան ունի։ Ենթադրութիւն կայ, թէ ինքը լիճն էլ հրաբուղխային ծագում ունի, բայց թէ ինչպէս է դոյացել, դրա մասին երկրաբանները դեռ լուռ են։

Զալալ Տեր-Գրիգորեան

(Ընդհատուածին)

*) Ընդհանրապէս Հայաստանի սահմաններում մինչև հիմա գտնուած է մօտ 100 ուրարտեան բևեռագիր յիշատակարաններ, որոնց մեծ մասը Վանի բերդում և շրջակայքում՝ մօտ 25 հատ Ռուսա-Հայաստանում (Երևանի նահանգում և Կարսի շրջանում) և մասամբ Ուրմիոյ լճի մօտը — Հայաստանի արևելքում և Կարնոյ մօտը — Հայաստանի հիւսիս-արևմուտքում։

ԳԻՇԱՏԻՉՆԵՐԸ ՁՐՕՍԱՆՔՈՒՄ

ՎԱԽԿՈՏ

(Ռոբերտ Ուարդի)

Էշերը էր։ Լուսինը ճղների միջից թափանցելով իւր նեղ ու կապոյտ գոյն խփող շերտերը գցել էր ծառերի երկար սուերի արանքներով, որտեղ տեղաւորւած էր վինտորների վաշտամասը։ Երեք օրւայ ծանր ճանապարհորդութիւնից յետոյ նրանք կանգ էին առել այս անտառածածկ բլրի վրայ։

Այս փոքրիկ, մօտ 80 հոգուց բաղկացած, վաշտամասին առաջնորդում էր գնդապետ Ֆէնհեկեր, տանելով նրանց Մերելինա ալազ զօրապետ Լիի մօտ։

Վերջին 40 մղոն առաջնորդ-

թեան վրայ վաշտամասը շատ երկիւղների էր հանդիպել։ Երջանկայքը լիքն էր թշնամիներով, այդ պատճառով գնդապետը չէր վճռում լուսնի լոյսով գետը անցնել։ Մի քանի ժամից յետոյ լուսինը կը

ծածկւէը հորիզոնի եաևը և այնու-հետև աներկիւղ կըլինէը անցնելը։

Ինննիկերը զինուորներին հրամայեց ծառերի տակ տեղաւորւիլ և իւր նոր հրամանին սպասել։ Իսկ նրանցից վեց հոգի պէտք է հսկէին շրջակայքը և նախազգու-շացնէին թշնամու յարձակման մասին։ Այդ պաշտօնի համար ա-ռաջարկւեց, որ կամաւորները դուրս գան և դնդապետը ժըպտաց, երբ առաջինը իւր որդին յանձն առաւ։ Սրա կողքին կանգնեց և վաշինգ-տոն կլէյը։

Այս կամաւորների խմբակ կառավարող պօրուչիկը (սպան) մօտեցաւ դնդապետին ու անհան-գիստ հարցրեց. — Պ. Գնդապետ, կարծեմ սևամորթին չէք ուղար-կի, այս դէրքերը շատ երկիւղալի են։ Մակ-կլելինտի վաշտամասը հէնց այս գիշեր կարող է մեզ վրայ յարձակւել, ուստի այսպիսի ժամանակ նեգրների վրայ յոյս դնել չի կարելի. նրանց մեծ մասը վախկոտ են և յարձակումից փախչող։ Պարոն, մտաբերեցէք վերստին և ի սէրն Աստուծոյ, տւէք ինձ սպիտակներին։

Գնդապետը ճակատը կնճռե-լով տատանման մէջ ընկաւ. պօրու-չիկ Ինազարդին մանկութիւնից ճա-նաչում էր. նա խօսում էր համոզ-ւած։ Գնդապետը իսկապէս մտա-բերեց Վիլսոնի կալւածքում տեղի ունեցած սարսափելի կոտորածը, երբ սևամորթները փախել, թփերի մէջ էին մտել, իսկ կալւածատէրը իւր ընտանիքով անպաշտպան ձա-ցած թշնամու ճանկը ընկել։

Նեգրը նկատեց իւր հրամա-նատարի կասկածը և վշտացած ներքին ծնօտը ցած գցեց։ Ծեր պարոնը տատանւում է, մտածեց նա, սակայն վաղը ի հարկէ պիտի երթայ այնտեղ, ուր ուղարկում են պարոն Նեդին։ Եթէ Նեդի ուղարկելու տեղը վտանգաւոր է, մի՞թէ ինքը վաշը նրա հետ մի-ասին չըպիտի լինի։ Մի՞թէ ինքը չի խոստացել իւր պատաւ մօրը չը թողնել իւր երիտասարդ պարո-նին։ Ինչո՞ւ դնդապետը ականջ է դնում պ. Ինազարդի տատծներին, թէ նա, Վաշինգտոնը վախկոտ է։ Ո՛չ։

— Պ. Նեդ, ի սէրն Աստուծոյ, պաշտպանեցէք ինձ, յուսահատւած շշնջաց նեգրը, դիմելով իւր մօտ կանգնած երիտասարդ պարոնին։

Նեգ Ինննիկերը մի քայլ ա-ռաջ անցաւ ու խօսեց.

— Հայր, ես գիտեմ, որ վա-շինգտոնը վախկոտ չէ. նա իւր կեանքը չի խնայի ձեզ համար. նրա վրայ կարելի է վստահ լինել։

Նեգրը խօսում էր եռանդով ու համոզիչ կերպով, իսկ նեգրի

ՁԻԱՐՇԱԻԼ ԱՆԴՐԿԱՍՊԵԱՆ ԵՐԳՐՈՒՄ

ԶԲՕՍԱՆՓ ՈՒՄԱԿԱՆ ՁՐԵՐԻ ՎՐԱՑ

խոշոր ու սև աչքերով աղերսող մեծացած, նրա հայրը նոյնպէս. հայեացքը օժանդակում էր այդ նա շատ հաւատարիմ է իւր ընխնդիրը։ տանիքին. այդ է պատճառը, որ

Փոքրիկ հերոսուհին

Ներքը խնդրում է նրա համար, —Գիտես, վաշինգտոն, այդ դիրքը հրկիզողի է, խաղա-

Թեննիկերը խորը նայեց նեգբին և իւր որդուն. չէոր վաշը իւր կալուածքումն էր ծնուած ու

թեամբ յայտարարեց գնդապետը։

—Այո՛ պարոն, գիտեմ։

—Եւ մեր կեանքը քո ձեռքումը կը լինի։

—Այո՛, պարոն։

—Եւ եթէ թշնամին յարձակուի, պահապանները անշուշտ կը սպանէք։

—Ես կարող եմ մեռնել, պարոն։

Այս խօսքերը այնքան հանդիսաւոր արտասանուեցին, որ չէր կարելի կասկածել նրանց հաստատակամութեանը

—Հայր իմ, Վաշինգտոնը քաջ է, նա ամուր է, ինչպէս պողպատ. թոյլ տուր նրան գնալ, ես պատասխանատու եմ նրա փախուստին։

Գնդապետի խիստ հայեացքը մեղմացաւ։

Լաւ, ասաց նա, թող դա էլ գնայ ձեզ հետ։ Դա մեր ընտանիքումն է մեծացել, Մազարդ, պօրուչիկին դիմելով, աւելացրեց Մեն նիկները, ես գիտեմ որ դա չի դաւաճանի։

Եւ Վաշինգտոն կլէյն իւր երիտասարդ պարոնի և դարձեալ չորս ընտրեալների հետ պօրուչիկ Մազարդի հսկողութեան տակ ուղեւորուեցին շրջակայքը հսկելու։

Երիտասարդ Մենինիկերի խընգրանօք Մազարդը Վաշինգտոնին տեղեակ պահեց բլրի գառիվայրի վրայ եղած թփերում, այստեղից բացւում էր դեպի այն մասի տեսարանը, որտեղ գետի եզերքը աւելի ցածրանում էր։

—Եթէ թշնամիները այսօր վճռեն գետն անցնել, ասաց պօրուչիկ Մազարդը, պահապաններին տեղեակ պահելով, նրանց առաջնորդը անշուշտ կընտրէ գետի այս տեղը անցնելու համար։

Or. Մ. Սերեբրեակեան

(Կը շարունակուի)

ԶԻԱՐՃԱԼԻՔ

Հանելուկներ

Ծալիչա ունեմ թաւ տալ չէ լինիլ։
Ոսկի ատներ համբիլ չէ լինիլ։

—

Հարց

Ինչու համար աքաղաղը երբ գիլիս աչքերը փակում է։

Շուտասելուկ

Մեր առանը եօթը պարկ, եօթը պարկին եօթը պարկահապիչ։

—

Ասացէք, որտեղ էք կարդացել այս Զարճալիքը։ Ով ճիշտը կասէ, կըստանայ 10 գիրք և պատկեր մըցանակ։

Երեւան Թ. Տեսէք 35 տարի առաջ Աղբիւրի № 4, երես 174-ում տպագրուած հետեւեալ հանելուկը։

Մի տուն ունենք տան նման չի։

Գետի ափին, մեծ ժայռի տակ
կըկըզած է մէնըմէնակ.
Գիշեր—ցերեկ բայղուշի պէս
Ջայն է հանում, գոռում այսպէս—
Թը՛ըխկ, չըը՛խկ.
Վը՛շտ, ճը՛շտ...
Առուն բարձրից ցած է թռչում,
Պատը ծակում, միջովն անցնում.
Յատակումը դղրդոց է,
Շըըմփոց ու թըըխկոց է։
Տան մէջ երկու ուժեղ դաշան,
Մինը տակին միւսը վրան,
Առիւծի պէս մռնչում են,
Իրար ըռեխ կոծոտում են...
Սրանք մարդ չեն, ոչ արջ, ոչ գայլ,
Ինչ էլ որ տաս քիչ է դարձեալ.
Հարամի են խոպառ քաղցած,
Էլ չեն լսում ոչ խօսք, ոչ լայ.
Դուրս են մղում իրանց փորից
Կերակուրը փոշ դարձած...
Այժմ ասէք այդ ինչ տուն է,
Որ մինչ այսօր էլ կանգնուն է։

Աղ. Առաստեանց

Այժմս կարդացէք ձեր գրածը...

1883 ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԱՄԵԱԿ ԱՂԲԻՒՐԻ 1917

ԱՂԲԻՒՐԸ *իր 35-րդ տարեշրջանին 1917 թ. նոյնպէս կը հոսի հայ մատաղ անդաստանում զարթի ու պայծառ իր կարկաչով մեր վարդ ու մանուշակ, շուշան ու յասմիկ, գարնանաբոյր մանուկներին ուսուցանելով իր նման յստակ ու անվհատ անդադրում օրերը աշխատանքը, չընկճելով ոչ մի խոչընդոտի առաջ իր նպատակը իրականացնելու, այն է՝ տածել բարի նախանձ դէպի վեհն ու ազնիւը եւ խորշել չարից, տգեղից, վատից, լինել անվեհեր, հաւատալ ծշմարտութեան յաղթանակին, որին հասնելու միակ ճշմարիտ ղէնքերն են գիտութիւնն ու արուեստը:*

ՏԱՐԱԶԸ *իր 28-րդ տարեշրջանին, ՄԻԱԿ ՀԱՅ ԻԼԼԻՒՍՏՐԱՑԻՕՆԸ, կը շարունակէ արտացոլել հայկական, համաշխարհային գրական հաղաքագիտական-ինինադատական-հասարակական-բատրոնական-երաժշտական-գիտական, գեղագիտական կեանքը: Իբրև հմայիչ, շքեղ ու փարթամ հրատարակու-թիւն* **ՏԱՐԱԶԸ** *հայութեան մէջ չունի մրցակից:* **ՏԱՐԱԶԸ** *համաշխարհային մտաւոր մեջ ճանաչուած է իբրեւ հուչակաւոր եւ շեղ հրատարակութիւն:*

1917 թ. ՏԱՐԱԶԸ լոյս է տեսնելու աւելի ևս ustar ծաւալով ու աւելի ևս հմայիչ:

Աբեսսը՝ լինի նա արտայայտուած բանաստեղծի վառ շրթունքներով, հրաշագործ նկարչի վրձինով, թէ սիրտ տրոփացնող վիպագրի գրչով ՏԱՐԱԶՈՒՄ առաջին տեղն ունի:

ՓՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ՝ մեր առօրեայ, հասարակական կեանքի՝ լինի նա արտայայտուած վէպով, պատմուածով, ֆելիետոնով, թէ կատակով ՏԱՐԱԶԻ գրական-ժամանակագրական մասը պիտի կազմէ:

ՊԱՏԿԵՐՆԵՐ, ՆԿԱՐՆԵՐ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ՝ թէ արդի և թէ անցած դնացած, մանաւանդ մեր կեանքի, ՏԱՐԱԶԻ մէջ բռնում են մեծ տեղ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ՝

Աղբիւրը *տարին 5 ր.* Աղբիւր-Տարազ *10 ր.*, Աղբիւր-Տարազ LUXE *(շքեղ) հրատարակութիւն* 25 *րուբ.* Արտասահմանի *համար (Եւրոպա, Ամերիկա, Հնդկաստան) 50 ֆր. կամ 40 շիլինգ, Պարսկաստանի համար 18 ր.:*

Աղբիւր-Տարազի *բաժանորդը համարւում է մշտական հիւր Գրական-Գեղարուեստական Սալօնին և ազատ կարող է ներկայ լինել իւրաքանչիւր* ուրբաթ *դռնբաց* jour-fixe-*ներին:*

Ապատիկ եւ մաս-մաս բաժանորդագրութիւն ոչոքից եւ ոչ մի պայմանով չէ ընդունւում:

Հասցէն՝ Тифлис, Редакція жур. „АГБЮР-ТАРАЗ", Tiflis (Gaucase) Dirèction „AGBUR-TARAZ".

Дозв. воен. ценз. Типографія „Ратап", Тифлис, Головинскій пр. 41.